

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐ- ՊՈՒԹԻՒԽՆԸ

Դպրոցական ֆօնդ կայ արդէն:

Գոնէ դրված է նրա հիմքը, չը նու-  
ելով զանազան խոչընդոտներին, ո-  
րոնք յարուցվեցին նրա դէմ:

Որքան մենք գիտենք, մօտ կէս մի-  
լիօն բուրլի գումար է հաւաքվել մին-  
չև այսօր, ինչպէս ցոյց է տալիս  
«Մշակի» մէջ այսօր տպված տեղե-  
թիւնը:

Ընդհանուր դպրոցական ֆօնդ կազ-  
մելու համար դա աննշան, չնչին գու-  
մար է և բնաւ պատիւ չէ բերում մեր  
ազգային ինքնազիտակցութեան ու  
արժանապատութեան:

Ազգովին տօնեցինք, սկսեալ նէվայի  
ափերից մինչև Գանգէսի ափերը հայ  
գրերի գիւտի 1500-ամեակի և հայ  
տպագրութեան 400-ամեակի համազ-  
գային յօրելեանը, և այդ յօրելեանը  
յաւերժացնելու սահմանված դպրոցա-  
կան ֆօնդին նուիրաբերեցինք միայն  
կէս միլիօն, այն ևս մեծ մասը գոյա-  
ցած կտակներից և այս կամ այն հաս-  
ատութեան յատկացումներից: Ամբողջ  
ազգի մէջ չեղաւ մի փառաւոր ժեստ  
կատարող անձն, ամբողջ ազգի մէջ  
չը գտնվեց մեր միլիօնատէրերից մէ-  
կը, որ միանգամից գոնէ 100,000 ր.  
նուիրէր այդ վեհ և մեծ նպատակի  
համար:

Այդ բաւական չէ, մենք աշխատե-  
ցինք նոյն իսկ ջլատել, անդամալու ծել  
հանգանակութեան գործը մեր ներքին  
երկարակութիւններով, անաեղի և  
անժամանակ ծրագիրներով:

Բայց այնու ամենայնիւ դպրոցական  
ֆօնդի հիմքը դրված է:

Գործը սկսված է և ինչպէս ասում  
են ֆրանսիացիները, գործի սկիզբը—  
գործի կէսն է:

Մի անգամ որ հիմքը դրված է, նա-  
կարող է հետզհետէ զարգանալ, աճել,  
որովհետև կը լինեն այսուհետև ևս  
կտակներ, նուիրաբերութիւններ և ժա-  
մանակի ընթացքում դպրոցական ֆօն-  
դը կաճէ, կուռճանայ և վերջ ի վեր-  
ջոյ կաթիլներից կը կազմվեն վտակ-  
ներ, գետեր:

Հարկաւոր է այժմ կազմակերպել  
գործը, լու և առողջ հիմքերի վրա  
դնել նրան:

Էջմիածինը, ուր կենտրօնացած է  
դպրոցական ֆօնդը, միայն աւանդա-  
պահ է, նա չէ կարող ինքը վարել  
գործը և պէտք ունի ժողովրդի աջակ-  
ցութեան, քանի որ գործն ևս խորա-  
պէս ժողովրդական է:

Ամենք առաջ պէտք է մշակվի և  
հաստատվի ֆօնդի կանօնադրութիւնը:  
Այդ կանօնադրութեան ծրագիրը պէտք  
է մշակվի և խմբագրութիւններով, մա-  
մուլի ու թեմական տեսուչների քըն-  
ութեան և ապա, վերջնականապէս  
խմբագրվելով, հաստատվի կաթողիկո-  
սի կողմից: Ֆօնդի պահպանութեան,  
շահագործման եղանակի և նրա գոր-  
ծադրութեան պաշտօնը պէտք է յանձն-  
վի մի յատուկ յանձնաժողովի, որի  
անդամներ պէտք է լինեն ամեն մի  
թեմի ժողովրդի կողմից ընտրված եր-  
կու ներկայացուցիչներ: իսկ եթէ  
դպրոցական ֆօնդը լինելու է համազ-  
գային, նաև թիւրքիայի և Պարսկաս-  
տանի հայութեան ազգային վարչու-  
թիւնների ներկայացուցիչները: Այդ  
յանձնաժողովը, նախագահութեամբ Ա-  
մենայն Հայոց կաթողիկոսի կամ նրա  
ներկայացուցչի, տարեկան երկու ան-  
գամ կը գումարվի էջմիածնում և կը  
տնօրինէ բոլոր գործերը, յանձնելով  
գործադրութիւնը մի մնայուն ըիւրօյի,  
կից սինօդին, կամ իրան՝ սինօդին:

Մենք ընդգծեցինք կանօնադրութեան  
էական կէտերը, զանց առնելով ման-  
րամասնութիւնները:

Մենք կամեցանք շեշտել այն հան-  
գամանքը, որ դպրոցական ֆօնդի վա-  
րումը, տնօրէնութիւնը պէտք է կա-  
տարվի ժողովրդի ներկայացուցիչների  
ձեռքով, որպէս զի գործը լինի արդիւ-  
նաւէտ և նպատակայարմար:

Հ. Առաքելեան